## ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2020 թվականին գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների պլանում 2020թ. փետրվարի 10-ին փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտության և ծախսային հոդվածների համապատասխանության վերաբերյալ**

«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՁԻԱՀ-ի ԿՀԿ) վճարովի ծառայությունների իրականացման նպատակով նախատեսվում է ձեռք բերել համապատասխան քանակի ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հակածին/հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման թեստ-հավաքածուներ: Ելնելով նախահաշվային գումարի չափից, միաժամանակ, նախատեսվում է համամասնորեն նվազեցնել մանկական սննդի ձեռքբերման առավելագույն քանակը: Նախատեսվում է նաև կատարել փոփոխություններ «Հեռահաղորդակցման ծառայություններ» նախահաշվային տողում:

Ծախսերը նախատեսվում է իրականացնել սեփական ֆինանսական միջոցներից, Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի, ինչպես նաև «Միգրանտների զուգընկերների շրջանում ՄԻԱՎ վարակի և սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում և խոցելիության նվազեցում» ծրագրի միջոցներից՝ ծախսային հոդվածներին համապատասխան: